ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
,,ՎԱՐԴԵՆԻՍԻ
ՆՅԱՐԴԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՏՈՒՆ-
ԻՆՏԵՐՆԱՏ" ՊՈԱԿ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ТРУДА И
СОЦИАЛЬНЫХ ВОПРОСОВ
,,ВАРДЕНИССКИЙ
НЕВРОПСИХОЛОГИЧЕСКИЙ ДОМ-
ИНТЕРНАТ" ГНКО

Հայաստանի Հանրապետություն Ք.Վարդենիս Զորավար Անդրանիկի 4, 1-ին նրբ.
Республика Армения Г.Варденис ул.Зоравара Андраника 4, пер.1
vardenisinternat@mail.ru
0269 22721

N° 969
« 13 » «11» 2019 թ.

Ինֆինիտի Գրուպ ՍՊԸ-ի տնօրեն
պարոն Ա. Երիջանյանին

Հարգելի պարոն Երիջանյան

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Ինֆինիտի Գրուպ ՍՊԸ-ի միջև (այսուհետև Ընկերություն) 21.08. 2019թ կնքած հանդեճանքի և փափուկ գույքի ձեռք բերման N ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/5-Վ-Ի ծածկագրով պետական գնման պայմանագրի (այսուհետև Պայմանագիր) շրջանակներում Ընկերությոան կողմից պետք է իրականացվեր Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ ՊՈԱԿ-ին հանդեճանքի և փափուկ գույքի մատակարարում: ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 104-րդ կետի պահանջներին համապատասխան Պայմանագրով սահմանված Գնորդի իրավունքների և պարտականությունների իրականացումը վերապահվում է «Վարդենիսի նյարդահոգենանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ – ին /ՀՎՀՀ՝08800705/:
Սակայն 2019 թ նոյեմբերի 13- ի դրությամբ Ընկերության կողմից չի հաստատվել տուն-ինտերնատի կողմից ուղարկված համաձայնագիրը , ինչպես նաև չի մատակարարվել պայմանագրում նշված ապրանքը:
Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.1 և 2.1.7.1 կետերը՝ (Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են հինգ օրից ավելի և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով (Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով) նախատեսված տուգանքը.Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են հինգ օրից ավելի):
Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ ՊՈԱԿ-ը նոյեմբերի 13-ից միակողմանի լուծում է N ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/5-Վ-Ի ծածկագրով պետական գնման պայմանագիրը:
Միաժամանակ ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման » կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով , պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ ՊՈԱԿ-ը հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի

միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:
«Ինֆինիտի Գրուպ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց 5 բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 8287 , 5 ՀՀ դրամը՝ որպես տույժ և 19500 ՀՀ դրամ 900005000758 գանձապետական հաշվեհամարին՝ որպես տուժանք պայմանագրի 10% -ի չափով՝ պայմանագրի կատարման ապահովում:

Հարգանքով տնօրեն՝ Կ. Խաչատրյան